

Հիմնական տեղեկություններ | APPEAR III | 2020-2027 թթ

Նպատակը

APPEAR ծրագիրը նպաստում է Կայուն զարգացման նպատակների (SDG) իրականացմանը: Ընդհանուր նպատակն է ուժեղացնել գիտական հիմքը և ինստիտուցիոնալ հնարավորությունները գործընկեր երկրներում բարձրագույն կրթության, հետազոտության և կառավարման ոլորտում՝ ավստրիական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ ակադեմիական գործընկերության միջոցով և մագիստրոսների և գիտությունների դոկտորների կրթաթոշակների ստացման համար: Ավելին, APPEAR ծրագիրը նպատակ է հետապնդում բարելավել միջազգային համագործակցությունը և զարգացումը ավստրիական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

APPEAR-ը Չարգացման համագործակցության ավստրիական (ADC) ծրագիր է, որի նպատակն է իրականացնել բարձրագույն կրթության և հետազոտությունների աջակցության իր ռազմավարությունը՝ ակադեմիական ինստիտուցիոնալ մակարդակով զարգացման համար: Այն իրականացվում է ADC ծրագրի 11 առաջնահերթ երկրներում և առանցքային տարածաշրջաններում, որոնք գտնվում են Արևելյան, Արևմտյան և Հարավային Աֆրիկայում, Հարավային Ասիայում, Մերձավոր Արևելքում, Հարավային Կովկասում և Հարավարևելյան Եվրոպայում:

Իրավասու երկրները

- Բուրկինա Ֆասո, Եթովպիա, Ուգանդա, Մոզամբիկ
- Բուրան
- Պաղեստին
- Հայաստան, Վրաստան
- Ալբանիա, Կոսովո (գործադրվում են հատուկ պահանջներ) և Մոլդովայի Հանրապետություն

Ծրագրի թեմատիկ ուղղվածությունը

Չարգացման նպատակով բարձրագույն կրթության և հետազոտությունների ինստիտուցիոնալ հնարավորությունների ուժեղացում:

- Աղթատության վերացում և հիմնական կարիքների՝ ջրի, սանիտարական պայմանների, էլեկտրաէներգիայի, սննդի անվտանգության, ներառյալ համալիր մոտեցումը, բոլորի համար հասանելի կրթության, սոցիալական պաշտպանության և բոլորի համար հասանելի աշխատանքի բավարարում
- Մարդու իրավունքներ, գենդերային հավասարություն, կանանց և աղջիկների իրավունքների ընդլայնում, միգրացիա
- Կայուն տնտեսական զարգացում՝ մասնավոր հատվածի զարգացում, կայուն տնտեսության և քաղաքաշինության զարգացում, գործընկեր երկրներում թվային տեխնոլոգիաների, հարկային համակարգերի և ներքին եկամուտների օգտագործում
- Շրջակա միջավայրի պաշտպանություն և բնական ռեսուրսների կայուն կառավարում՝ կլիմայի փոփոխության և դրա հետևանքների մեղմացում, Էկոհամակարգերի

պաշտպանություն, բնական ռեսուրսների պատասխանատու օգտագործում, կայուն էլեկտրաէներգիա, ջուր և սանիտարական պայմաններ

- Խաղաղություն, հակամարտության կանխարգելում, անվտանգություն և զարգացում, կառավարում, մարդասիրական օգնություն

Instruments (Գործիքներ)

Գործիք	Տևողություն	Ֆինանսավորման չափը
Նախապատրաստական ֆինանսավորում	մինչև 4 ամիս	մինչև 15,000 եվրո
Ակադեմիական գործընկերություն	մինչև 4 տարի՝ կախված մրցույթից	2 ինստիտուտների գործընկերություն. տարեկան 50,000 – 90,000 եվրո Ավելի քան 2 ինստիտուտների գործընկերություն. տարեկան 50,000 – 130,000 եվրո
Ընդլայնված ակադեմիական գործընկերություն	մինչև 3 տարի՝ կախված մրցույթից	
Extended Impact Institutional Partnership (Ընդլայնված ազդեցությամբ ինստիտուցիոն գործընկերություն)	մինչև 2 տարի՝ կախված մրցույթից	
Extended Impact External Partnership (Ընդլայնված ազդեցությամբ արտաքին գործընկերություն)	մինչև 3 տարի՝ կախված մրցույթից	

Նախապատրաստական ֆինանսավորում

Այս գործիքը նպատակաուղղված է նոր ակադեմիական համագործակցության հնարավորություններ ընձեռելու Ավստրիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների և գործընկեր երկրների բարձրագույն ուսումնական և հետազոտական հաստատությունների միջև: Այս փոքր մասշտաբի նախագծերի նպատակն է APPEAR ակադեմիական գործընկերության համար մշակել համատեղ ծրագրի առաջարկ:

Ակադեմիական գործընկերություն

Այս գործիքը ֆինանսավորում է խորացված և կայուն ակադեմիական համագործակցությունը բարձրագույն կրթության, հետազոտությունների և կառավարման ոլորտներում:

Ընդլայնված ակադեմիական գործընկերություն

Այս գործիքը հասանելի է այն միավորումներին, որոնք հաջողությամբ ավարտել են APPEAR ծրագրի Ակադեմիական գործընկերության նախագիծը: Այն ֆինանսավորում է շարունակական բնույթ կրող ակադեմիական համագործակցությունը, որը հիմնված է ավարտված նախագծի արդյունքների վրա և մշակում է նոր նորարարական ձևեր բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտում համագործակցության համար:

Ընդլայնված ազդեցությամբ գործընկերություն

Այս գործիքը հասանելի է այն միավորումներին, որոնք հաջողությամբ ավարտել են APPEAR ծրագրի Ակադեմիական գործընկերության նախագիծը կամ APPEAR ծրագրի Ընդլայնված ակադեմիական գործընկերության նախագիծը: Գործիքի նպատակն է բարելավել ավարտված նախագծի (նախագծերի) ազդեցությունը՝ կենտրոնանալով ձեռք բերված արդյունքների կիրառման և օգտագործման վրա: Անհրաժեշտության դեպքում, ազդեցությունն ուժեղացնելու

Նպատակով ակադեմիական հաստատությունների միավորումները կարող են հրավիրել ոչ ակադեմիական հաստատություններին միանալու: Կախված Ընդլայնված ազդեցությամբ գործընկերության նպատակառոչվածությունից՝ այն կարելի է տարբերակել հետևյալ կերպ.

- **Ընդլայնված ազդեցությամբ ինստիտուցիոն գործընկերություն.** Նպատակ է հետապնդում բարելավել կազմակերպական և ենթակառուցվածքային համակարգերն ու գործընթացները ներգրավված գործընկեր հաստատությունների հետազոտությունների, ուսուցման և կառավարման ոլորտում, ամրապնդում է հետազոտությունների նախաձեռնումը հաստատություններում և խթանում է ակադեմիական հաստատությունների տարածաշրջանային համագործակցությունը ինստիտուցիոն հնարավորությունների զարգացման գործում:
- **Ընդլայնված ազդեցությամբ արտաքին գործընկերություն.** Նպատակ է հետապնդում քննարկել և կիրառել հետազոտության արդյունքները շահագրգիռ կողմերի (համայնքներ, քաղաքացիական հասարակություն, քաղաքականություն մշակողներ) հետ՝ հետազոտությունը կիրառման մեջ դնելու համար (քաղաքականության և պրակտիկայի փաստեր), նպաստում է SDG-ների ձեռքբերմանը գործնականում:

Բոլոր instruments -ը (գործիքներ) նպաստում են APPEAR ծրագրի ընդհանուր նպատակին՝ ամրապնդելով գիտական հիմքը և ինստիտուցիոն հնարավորությունները գործընկեր երկրներում բարձրագույն կրթության, հետազոտությունների և կառավարման ոլորտներում, ինչպես նաև խթանելով Ավստրիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում միջազգային համագործակցության և զարգացման հակվածությունը: Այս instruments -ի (գործիքներ) շրջանակներում ֆինանսավորվող նախագծերը կենտրոնանում են APPEAR-ի թեմատիկ ոլորտներից մեկի կամ մի քանիսի վրա և նպաստում են SDG-ների ձեռքբերմանը:

Նախագծի մշակման 7 իրականացման ղեկավարող սկզբունքները

- Մասնակցային մոտեցում
- Մշակութային առաջատար հայացքներով գիտելիքների հասկացություն
- Գործնական և էմպիրիկ ուղղվածությամբ մոտեցում
- Գենդերային զգայունություն
- Ինքնագործ և պահանջարկի վրա հիմնված մոտեցում
- Ոչ մեկին հետ չթողնելու սկզբունք
- Ազատ մուտքի իրավունք - բաց տվյալներ

Ավելացված արժեքներ՝ տարրեր, որոնք դիտարկվում են նախագծի ընտրության գործընթացում

- Համապատասխանեցում ADC երկրների ռազմավարությունների գերակայություններին, ADC-ի կողմից ֆինանսավորվող ընթացիկ նախագծերի հետ փոխգործակցության տեսությունների օգտագործում
- Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը APPEAR ծրագրի բազմազանության ռազմավարությանը համապատասխան
- Տարածաշրջանային ցանցերի և հարավ-հարավ համագործակցության ամրապնդում
- Երիտասարդ և մասնավորապես կին հետազոտողների խթանում
- Գործնականորեն ուղղված գործունեություն, որը խթանում է արդյունքների կիրառումը, հետազոտությունների կիրառումը և դրանց յուրացումը
- Նախագծի պատասխանատվությունը գործընկեր երկրում գործող հաստատության կողմից

Իրավասու ինստիտուտներ

Ավստրիական ինստիտուտներ.

- Մասնակցել կարող են միայն բարձրագույն ուսումնական հաստատությունները: Նրանք կարող են ներկայացնել և համակարգել նախագիծը:

Գործընկեր երկրներում գործող ինստիտուտներ.

- Հիմնական թիրախային խումբն են՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները և հետազոտական հաստատությունները: Նրանք կարող են ներկայացնել և համակարգել նախագիծը:
- Այլ հաստատություններ, ինչպես օրինակ՝ հետազոտական և ուսուցողական հաստատությունները, ոչ առևտրային կազմակերպությունները, գիտահետազոտական կենտրոնները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, իրավունք ունեն մասնակցելու որպես լրացուցիչ գործընկերներ: Մասնավոր սեկտորի սուբյեկտները կարող են ընդգրկվել, սակայն իրավունք չունեն ֆինանսավորում ստանալու: Այլ ինստիտուտները չեն կարող նախագիծ ներկայացնել/համակարգել:

Նախագիծը պետք է բաղկացած լինի առնվազն մեկ ավստրիական բարձրագույն ուսումնական հաստատությունից և գործընկեր երկրում գործող մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից: Դրանցից յուրաքանչյուրը կարող է ստանձնել համակարգողի պատասխանատվությունը:

Գործընկեր երկրներում գործող այլ ինստիտուտները կարող են լինել միայն միավորման լրացուցիչ գործընկերներ. այդ միավորումը պետք է բաղկացած լինի առնվազն մեկ ավստրիական բարձրագույն ուսումնական հաստատությունից և մեկ բարձրագույն կամ հետազոտական հաստատությունից գործընկեր երկրում:

Հարակից գործընկեր ինստիտուտներ.

- Դրանք գտնվում են Ավստրիայից և 11 գործընկեր երկրներից դուրս, բայց [2արգացման նպատակով պաշտոնական օժանդակություն \(ODA\) ստացողների OECD DAC ցուցակում նշված երկրում](#): Դրանք կազմված են բարձրագույն ուսումնական հաստատություններից, հետազոտական հաստատություններից, հետազոտական և ուսուցողական հաստատություններից, ոչ առևտրային կազմակերպություններից, գիտահետազոտական կենտրոններից կամ քաղաքացիական հասարակության կազմակերպություններից: Հարակից գործընկեր ինստիտուտը պետք է տեղակայված լինի նույն մայրցամաքում, ինչ որ հիմնական միավորման գործընկեր ինստիտուտը: Հարակից գործընկեր ինստիտուտները կարող են ֆինանսավորում ստանալ: Այնուամենայնիվ, բոլոր հարակից գործընկեր ինստիտուտների գումարը չպետք է գերազանցի ընդհանուր բյուջեի 30%-ը: Մասնավոր սեկտորի սուբյեկտները կարող են ընդգրկվել, սակայն իրավունք չունեն ֆինանսավորում ստանալու:

ԵՄ ինստիտուտներ.

- ԵՄ անդամ պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները կարող են ընդգրկվել նախագծում, բայց չեն կարող ֆինանսավորում ստանալ:

Ալբանիա և Կոսովո

Ալբանիայի և Կոսովոյի հետ համագործակցության նախագծերի համար գործում են հատուկ պահանջներ: Չնայած բոլոր instruments-ը (գործիքներ) հասանելի են Կոսովոյի և Ալբանիայի ինստիտուտների հետ գործընկերության համար, ֆինանսավորվում են միայն զարգացման հետազոտական նախագծերը: Բարձրագույն կրթության կամ կառավարման հնարավորությունների բարելավմանն ուղղված նախագծերը իրավասու չեն: Բացի այդ, նախագծերը պետք է համապատասխանեցվեն Ալբանիայում և Կոսովոյում ADC-ի առաջնահերթ պահանջներին: Միավորումները պետք է մանրամասն ներկայացնեն, թե ինչու է Տարբերակ

Նախագիծը լավագույնս համապատասխանում APPEAR ծրագրին և, թե ինչու այն չի կարող ֆինանսավորվել այլ ծրագրերի կողմից (օրինակ՝ ԵՄ):

Ֆինանսավորվող ծախսեր

Գործիք	Անձնակազմի հետ կապված ծախսեր	Ճամփորդական և սննդի ծախսեր	Սարքավորումների և նյութերի ծախսեր	Տարածման ծախսեր	Այլ ծախսեր	Վերադիր ծախսեր
Նախապատրաստական ֆինանսավորում	x	x			x	առավելագույնը՝ 2%
Ակադեմիական գործընկերություն	x	x	x	x	x	առավելագույնը՝ 10%
Ընդլայնված ակադեմիական գործընկերություն	x	x	x	x	x	առավելագույնը՝ 10%
Ընդլայնված ազդեցությամբ գործընկերություն	x	x	x	x	x	առավելագույնը՝ 10%

Մագիստրոսների փոփոխությունների դոկտորների կրթաթոշակներ

APPEAR ծրագրի նպատակներից մեկն այն է, որ իրավասու երկրների բարձրագույն ուսումնական հաստատություններում ավելանա որակավորված մասնագետների քանակը, ինչը հնարավորություն կտա նպաստել իրենց հաստատություններում ուսուցման, հետազոտությունների և կառավարման կատարելագործմանը: Իրավասու երկրների ուսանողներն ու մասնագետները ավարտում են իրենց մագիստրոսի կամ գիտությունների դոկտորի կոչումը Ավստրիայի համալսարանում: Կրթաթոշակների առնվազն 70%-ը պետք է տրվի մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողներին, ովքեր ընդգրկված են APPEAR ծրագրի գործընկերության մեջ: Անհատական կրթաթոշակների առնվազն 50%-ը կտրվի կին դիմորդներին:

Գոյություն ունի APPEAR ծրագրի կրթաթոշակների երկու տեսակ.

- Մագիստրոսի և գիտությունների դոկտորի կրթաթոշակներ, որոնք ներառված են ընթացիկ APPEAR ծրագրի գործընկերության մեջ:
- Գիտությունների դոկտորի կրթաթոշակներ, որոնք անհատական են, այսինքն՝ ներառված չեն ընթացիկ APPEAR գործընկերության մեջ:

Պահանջները

- Դիմորդը առաջադրվում է իր իսկ բնակության երկրի ինստիտուտի կողմից: Ինստիտուտը հաստատում է, որ կրթաթոշակը համապատասխանում է հաստատության որոշակի պահանջներին և բնակության երկրի զարգացման կարիքներին (օրինակ՝ բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ծրագրի շրջանակներում է), և որ դիմորդն աշխատում է և կրկին աշխատանքի

կվերցվի ինստիտուտի կողմից:

- Եթե ուսումնական նախագիծը (այսինքն՝ կրթաթոշակը) ներառված է ընթացիկ APPEAR ծրագրի գործընկերության մեջ, գործընկերության համակարգողը նկարագրելու է, թե ինչպես է ուսումնական նախագիծը նպաստելու գործընկերության նպատակին:
- Ուսումնական նախագծի ընդունման հաստատումը կրթաթոշակն ընդունող ավստրիական ինստիտուտի գիտական ղեկավարի կողմից
- Դիմորդը հաստատում է ուսումնական նախագիծն ավարտելուց հետո հայրենիք վերադառնալու և համապատասխան, զարգացման հետ կապված հանձնարարականներին հետևելու իր մտադրությունը:

Ֆինանսավորվող ծախսեր

Մագիստրատուրա՝ ամսական 1,100 եվրո (մինչև 48 ամիս)

Ասպիրանտուրա՝ ամսական 1,100 եվրո (մինչև 48 ամիս)

Ճամփորդական ծախսեր (ներառյալ բնակության երկրում ուսումնա-արտադրական պրակտիկան) և լրացուցիչ դրամաշնորհներ (գերմաներենի դասընթացներ, գիտաժողովներին/դասընթացներին մասնակցություն, թեգերի նպաստներ)

Մրցույթներ

APPEAR III ծրագրի շրջանակներում ֆինանսավորման առաջին մրցույթը նախատեսվում է բացել 2021 թվականի սկզբին: Այնուհետև 2022, 2023 և 2024 թվականներին կլինեն հաջորդ մրցույթները:

Կոնտակտային տվյալներ եվ տեղեկություններ

APPEAR ծրագրի գրասենյակ

OeAD-GmbH՝ Ավստրական կրթության եվ միջազգայնացման գործակալություն

Ebendorferstrasse 7

1010 Vienna, Austria

Էլ. փոստ՝ appear@oead.at

Վեբկայք՝ www.appear.at